Հավելված N 14
ՀՀ կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 28-ի N 1717 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՕՐԵՆՔՈՎ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ, ՄԻՋԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ, ՆՈՒՅՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է՝

1) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ և Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարությանը (այսուհետ՝ կառավարություն) վերապահված իրավասությունների շրջանակներում բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների (այսուհետ՝ գլխավոր կարգադրիչներ) գծով Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով (այսուհետ՝ տվյալ տարվա պետական բյուջե) նախատեսված հատկացումների վերաբաշխումների կատարումը.

2) բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն բաժնի նույն խմբի նույն դասին պատկանող՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համապատասխան մարմինների ցանկերում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը.

3) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան կառավարության կողմից սահմանված՝ տվյալ տարվա պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնություններով նախատեսված հատկացումների միջեռամսյակային տեղաշարժերի կատարումը.

4) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի դրույթի պահանջի համաձայն կառավարության կողմից հաստատված տվյալ տարվա պետա-

կան բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխությունների և լրացումների կատարումը:

2. 2018 թվականի հունվարի 1-ից տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսվող բյուջետային հատկացումների բոլոր վերաբաշխումների, միջեռամսյակային տեղաշարժերի, բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն բաժնի նույն խմբի նույն դասին պատկանող՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համապատասխան մարմինների ցանկերում փոփոխությունների և (կամ) լրացումների, տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխությունների և լրացումների (բացառությամբ սույն կարգի 3-րդ կետում նշված դեպքերի) կատարման կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ ֆինանսների նախարարության) կողմից՝ վերջինիս սահմանած ընթացակարգերով (եթե այլ բան չի նախատեսվում Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականով կամ սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության ընդունած որոշմամբ կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով), առանց այդ հարցերը կառավարություն ներկայացնելու:

3. Սույն կետում նշված դեպքերում տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումներ, գործադիր իշխանության համապատասխան մարմինների ցանկերում փոփոխություններ և (կամ) լրացումներ, միջեռամսյակային տեղաշարժեր, ինչպես նաև տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով գլխավոր կարգադրիչները սահմանված կարգով կառավարության քննարկմանը ներկայացնում են կառավարության համապատասխան որոշման նախագիծ՝

1) տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսվող «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի ներգրավվածությամբ բյուջետային հատկացումների միջծրագրային վերաբաշխումների դեպքում, եթե դրանց արդյունքում նշված ծրագրով սահմանված բյուջետային հատկացումների եռամսյակային (աճողական) կամ տարեկան ծավալը նվազում է.

2) կապիտալ շինարարության և հիմնանորոգման ծրագրերում (ներառյալ նախագծումը, հեղինակային և տեխնիկական հսկողությունը) ընդգրկված օբյեկտների ցանկերի կազմի և (կամ) դրանց գծով սահմանված հատկացումների փոփոխություն ենթադրող վերաբաշխումների դեպքում.

3) տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված բյուջետային ելքերի գծով կառավարության հաստատած արդյունքային ցուցանիշների փոփոխմանը հանգեցնող վերաբաշխումների դեպքում.

4) կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված ընթացակարգի կիրառմամբ գնում կատարելու նպատակով գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքերում.

5) Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված կապիտալ բնույթի ծախսերի նվազմանը հանգեցնող վերաբաշխումների դեպքում:

4. Տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրերով սահմանված բյուջետային հատկացումների վերաբաշխումներ, միջեռամսյակային տեղաշարժեր, գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել ինչպես այդ ծրագրերն իրականացնող գլխավոր կարգադրիչների կողմից ֆինանսների նախարարություն ներկայացվող համապատասխան հիմնավորված հայտերի հիման վրա, այնպես էլ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ:

5. Գլխավոր կարգադրիչների կողմից ֆինանսների նախարարություն ներկայացվող տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրերով սահմանված բյուջետային հատկացումների վերաբաշխումների, գործադիր իշխանության համապատասխան մարմինների ցանկերում փոփոխությունների և (կամ) լրացումների, միջեռամսյակային տեղաշարժերի, գնումների պլանում փոփոխությունների և լրացումների համապատասխան հայտերում ներկայացված տեղեկատվության (այդ թվում, որ հայտերի բավարարումը չի հանգեցնում հայտում նշված ծրագրերի գծով կառավարության հաստատած արդյունքային ցուցանիշների փոփոխությանը) հավաստիության, ինչպես նաև հայտերի առաջնահերթության և հրատապության հիմնավորվածության համար պատասխանատու են այդ գլխավոր կարգադրիչները:

6. Գլխավոր կարգադրիչների ներկայացմամբ տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումների, գործադիր իշխանության համապատասխան մարմինների ցանկերում փոփոխությունների և (կամ) լրացումների և միջեռամսյակային տեղաշարժերի, ինչպես նաև այդ հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխությունների և լրացումների իրականացման պարագայում.

1) տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված բյուջետային ելքերի գծով կառավարության կողմից հաստատված արդյունքային ցուցանիշների կատարման համար պատասխանատու են այդ գլխավոր կարգադրիչները.

2) պետության անունից արդեն իսկ ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացող պետության ֆինանսական կորուստների (պետության հանդեպ ֆինանսական պատժամիջոցների կիրառման արդյունքում վճարման ենթակա տուգանքների, տույժերի կամ դրա հետ

կապված այլ պարտադիր մուծումների գումարների) և այլ բացասական հետևանքների համար պատասխանատու են այդ գլխավոր կարգադրիչները:

7. Գլխավոր կարգադրիչների կողմից տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումներ, միջեռամսյակային տեղաշարժեր, ինչպես նաև տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով ֆինանսների նախարարություն ներկայացվող հայտերը ենթակա են մերժման, եթե դրանք՝

1) վերաբերում են սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքերին.

2) առաջարկվում է իրականացնել գնման գործընթացի շրջանակներում կնքված գործարքի արդյունքում առաջացած տնտեսումների 30 տոկոսը գերազանցող գումարի հաշվին (եթե այլ բան չի նախատեսվում Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականով կամ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության ընդունած որոշմամբ կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով): Այս դեպքում, տարվա ընթացքում պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման հարցը ենթակա է քննարկման ընդհանուր ընթացակարգով՝ տվյալ բյուջետային տարվա առաջնահերթությունների և պետական բյուջեի կատարման ընթացքի ընդհանուր համատեքստում՝ չկապակցվելով նշված տնտեսումների առկայության հետ: Ընդ որում, եթե որևէ գերատեսչության գծով պետական բյուջեով նախատեսված հատկացումների մասով տնտեսումներն առաջացել են իր կողմից նախաձեռված բարեփոխումների և օպտիմալացման իրականացման արդյունքում, ապա նշված տնտեսումների օգտագործման նախապատվությունը, որպես կանոն, տրվում է այդ ծրագրերն իրականացնող մարմիններին.

3) հանգեցնում են տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումների կամ գնումների գծով օրենքի, կառավարության կամ վարչապետի ընդունած որոշման կամ կառավարության ստանձնած պարտավորությունների ուժով տվյալ տարվա համար գործող առավելագույն սահմանաչափերի գերազանցմանը.

4) ներկայացվել են առանց համապատասխան հաշվարկ-հիմնավորումների կամ ներկայացված հաշվարկ-հիմնավորումները թերի են.

5) ներկայացվել են ֆինանսների նախարարության սահմանած ընթացակարգերի խախտումով.

6) հանգեցնում են Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված կապիտալ բնույթի ծախսերի ընդհանուր ծավալի նվազմանը:

8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգավորումները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից, ինչպես նաև

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1289-Ն որոշմամբ նախատեսված Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի արտաբյուջետային հաշվների միջոցների հաշվին գնման գործընթացի շրջանակներում կնքված գործարքների արդյունքում տնտեսումների առաջացման դեպքում:

9. Ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ տվյալ տարվա պետական բյուջեով այլ գլխավոր կարգադրիչների գծով նախատեսված ծրագրերով սահմանված բյուջետային հատկացումների վերաբաշխումներ, միջեռամսյակային տեղաշարժեր, գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել՝

1) տարբեր գլխավոր կարգադրիչների կողմից իրականացվող ծրագրերի միջև բյուջետային հատկացումների վերաբաշխումներ, միջեռամսյակային տեղաշարժեր իրականացնելու անհրաժեշտության դեպքում՝ դրանք նախապես համաձայնեցնելով այդ գլխավոր կարգադրիչների հետ, կամ՝

2) ելնելով տվյալ տարվա պետական բյուջեի կատարման ընթացքից (նշված դեպքում գլխավոր կարգադրիչների հետ համաձայնեցում չի պահանջվում)՝

ա. հիմք ընդունելով գլխավոր կարգադրիչների կողմից ներկայացված վերաբաշխումների, տեղաշարժերի հայտերում համապատասխան ծրագրերով (ներառյալ տնտեսագիտական դասակարգման առանձին հոդվածներով) առաջարկված հատկացումների նվազեցումների գծով առաջարկությունները, կամ՝

բ. տվյալ տարվա տարեվերջին՝ տվյալ տարվա պետական բյուջեի ծրագրային ցուցանիշների վերջնական ճշգրտման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ